

5.5. 77 տարածքի 2003թ. հուլիսի հիդրոդերևութաբանական պայմանների բնութագիրը

Ըստ 77 բնապահպանության նախարարության տեղեկատվության, հուլիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը տարածքի գերակշռող մասում նորմային մոտ է եղել: Լեռնային շրջաններում այն տատանվել է +15-ից +18°C, նախալեռներում՝ +18-ից +21°C (Աշտարակում՝ +25°C), Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +25-ից +26°C (Կապանում՝ +23°C սահմաններում):

Հուլիսի 1-2-ը և 3-րդ տասնօրյակում օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 3-5°C: Հուլիսի 1-2-ը նվազագույն ջերմաստիճանը լեռնային և նախալեռնային շրջաններում գրանցվել է +7 +12°C (Լոռիում՝ +3 +6°C), Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +12 +17°C:

Հուլիսի 5-7-ը և 16-ին օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 3-5°C: Այդ օրերին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում հասել է +32 +35°C, Արարատյան դաշտում՝ +34 +37°C, նախալեռնային շրջաններում՝ +28 +32°C, լեռնային շրջաններում՝ +25 +30°C:

Հուլիսին միայն 8 օր տեղումներ չեն դիտվել: Ամսական տեղումների քանակն Արարատյան դաշտում կազմել է նորմայի 200-270%-ը (Արտաշատում՝ 560%, Արարատում՝ 900%), Շիրակում, Կոտայքում՝ 160-240%, Տավուշում, Լոռիում, Գեղարքունիքում՝ 110-160%: Միայն Սյունիքում այն կազմել է նորմայի 5-15%-ը (Մեղրիում՝ 37%, Գորիսում՝ 55%): Չոր և շոգ եղանակի արդյունքում Սյունիքի հովիտներում առաջացել է բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակ:

Ուժեղ քամի գրանցվել է հուլիսի 8-ին, 28-29-ին և 31-ին Արմավիրում, Արարատում, Աշոցքում և Երևանում: Քամու առավելագույն արագությունը հասել է 14-19 մ/վրկ, Աշոցքում՝ 30 մ/վրկ:

Հուլիսի 17-ին Տաշիրում, 18-ին Շիրակում (գ. Ջաջուռ), Աշոցքում (գ. Կրասար, գ. Կարմրավան), 30-ին Երևանում դիտվել է կարկուտ, Շիրակում՝ 5 սմ տրամագծով:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը մոտավորապես կազմել են իրենց նորմաների 60-90%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 5 սմ-ով և 31.07.2003թ. դրությամբ կազմել է 1897.43 մ, որն 2002թ. նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 38 սմ-ով: Սևանա լճից ջրի բացթողումների ամսական ծավալը կազմել է 22.13 մլն. մ³:

Սևանա լճի մակարդակը 2002-2003թթ. ըստ ամիսների

Ամիս, ամսաթիվ	Լճի մակարդակը, մ		Լճի մակարդակի տարբերությունը, մ		
	2002թ.	2003թ.	բազայինից*		2003թ. - 2002թ.
			2002թ.	2003թ.	
01.31	1896.33	1896.77	- 0.36	+ 0.08	+ 0.44
02.28	1896.35	1896.82	- 0.34	+ 0.13	+ 0.47
03.31	1896.41	1896.89	- 0.28	+ 0.20	+ 0.48
04.30	1896.56	1897.11	- 0.13	+ 0.42	+ 0.55
05.31	1896.79	1897.34	+ 0.10	+ 0.65	+ 0.55
06.30	1896.97	1897.48	+ 0.28	+ 0.79	+ 0.51
07.31	1897.05		+ 0.36		
08.31	1896.99		+ 0.30		
09.30	1896.92		+ 0.23		
10.31	1896.86		+ 0.17		
11.30	1896.81		+ 0.12		
12.31	1896.76		+ 0.07		

* Որպես բազային ընդունվել է մակարդակի 1896.69 մ բարձրությունը 01.01.1997թ. դրությամբ: